ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/116

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Շին Տեխ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ծածկագրով բաց մրցույթ, շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6120-2020 գրությամբ «Շին Տեխ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 16.04.2020թ. թիվ 01/61-6605 գրության հիման վրա, 27.04.2020թ.-ին «Շին Տեխ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 27.04.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/116 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am:

20.05.2020թ.-ին և 27.05.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.05.2020թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանի, 16.04.2020թ. թիվ 01/61-6605 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 18.02.2020 և 21.02.2020 թվականներին հայտարարվել են համապատասխանաբար «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ծածկագրերով շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման ընթացակարգեր:

Ընթացակարգերին մասնակցության հայտ է ներկայացրել «Շին Տեխ» ՍՊԸ-ն (այսուհետև՝ Մասնակից): Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների որոշմամբ ընթացակարգերի ընտրված մասնակից է ճանաչվել «Շին Տեխ» ՍՊԸ-ն:

Մասնակիցը 13.04.2020 թվականին գնահատող հանձնաժողովներին ներկայացված գրությամբ հրաժարվել է գնման ընթացակարգերի հետագա մասնակցությունից:

Ելնելով վերոգրյալից՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի գ. ենթակետով, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50- րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով, ներկայացրել է հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում «Շին Տեխ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը լուծելու համար:

3. <u>«Շին Տեխ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 27.04.2019թ.-ին գրությամբ դիմել է «Շին Տեխ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6120-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2020/116 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 18.02.2020թ.-ին և 21.02.2020թ.-ին հայտարարվել են «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ծածկագրերով բաց մրցույթին ընթացակարգեր (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որոնց մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Շին Տեխ» ՍՊԸ-ն:

«Շին Տեխ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է

«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29», «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ծածկագրերով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.04.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչել «Շին Տեխ» ՍՊԸ-ին և որոշել է վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ծածկագրով ընթացակարգի 1-րդ, 2-րդ, 3-րդ, 8-րդ և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչել «Շին Տեխ» ՍՊԸ-ին և որոշել է վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«Շին Տեխ» ՍՊԸ-ն 13.04.2020թ.-ի թիվ 01 գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ հաշվի առնելով վերջինիս ֆինանսական դրությունը՝ Մասնակիցը հրաժարվում է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ծածկագրերվ գնման ընթացակարգերին հետագա մասնակցությունից:

«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը հաշվի առնելով «Շին Տեխ» ՍՊԸ-ի «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29» ծածկագրով ընթացակարգին հետագա մասնակցության դադարեցումը՝ որոշել է ընտրված մասնակից ճանաչելու նպատակով անցկացնել գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ:

«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին ենթակետը և «Շին Տեխ» ՍՊԸ-ի ընթացակարգին հետագա մասնակցության դադարեցումը, որոշել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6120-2020 գրությամբ «Շին Տեխ»

ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ նեթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացների հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով 18.02.2020թ.-ին և 21.02.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ծածկագրերով բաց մրցույթներին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Շին Տեխ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29», «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ծածկագրերով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.04.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչել «Շին Տեխ» ՍՊԸ-ին և որոշել է վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ծածկագրով ընթացակարգի 1-րդ, 2-րդ, 3-րդ, 8-րդ և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչել «Շին Տեխ» ՍՊԸ-ին և որոշել է վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«Շին Տեխ» ՍՊԸ-ն 13.04.2020թ.-ի թիվ 01 գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ հաշվի առնելով վերջինիս ֆինանսական դրությունը՝ Մասնակիցը հրաժարվում է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ծածկագրերվ գնման ընթացակարգերին հետագա մասնակցությունից:

«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը հաշվի առնելով «Շին Տեխ» ՍՊԸ-ի «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29» ծածկագրով ընթացակարգին հետագա մասնակցության դադարեցումը՝ որոշել է ընտրված մասնակից ճանաչելու նպատակով անցկացնել գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ:

«ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին ենթակետը և «Շին Տեխ» ՍՊԸ-ի ընթացակարգին հետագա մասնակցության դադարեցումը, որոշել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Շին Տեխ» ՍՊԸ-ն 13.04.2020թ.-ի թիվ 01 գրությամբ հրաժարվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/29» և «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/36» ծածկագրերով գնման ընթացակարգի հետագա մասնակցությունից, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.04.2020թ.-ի թիվ 26/26-1/6120-2020 գրությամբ «Շին Տեխ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/116 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Շին Տեխ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ